

ISSN 0321-0340

**ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՆԵՐԻ**

**N 2 (118)
2011**

**ԲԱՆԲԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԽԻՎՆԵՐԻ**

Գիտատեղեկատվական հանդես

**Вестник архивов
Армении**

Научно-информационный журнал

**Bulletin of Armenian
Archives**

Scientifically-information journal

**2 (118)
2011**

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1960 ԹՎԱԿԱՆԻՑ

ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԻՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

Հրատարակումը երաշխավորված է
Հայաստանի ազգային արխիվի
գիտխորհրդի կողմից

Գլխավոր խմբագիր՝

Ամատունի Վիրաբյան (պատմական գիտությունների
դոկտոր)

Խմբագրական խորհուրդ

Արմեն Բադալյան (պատասխանատու քարտուղար -
պատմական գիտությունների թեկնածու)

Ավագ Հարությունյան (պատմական գիտությունների
թեկնածու), Էմմա Հովսեփյան (բանասիրական
գիտությունների թեկնածու), Սոնյա Միրզոյան

(պատմական գիտությունների թեկնածու), Աշոտ

Մելքոնյան (պատմական գիտությունների դոկտոր),

Արամ Սիմոնյան (պատմական գիտությունների դոկտոր)

© Բանբեր Հայաստանի արխիվների, 2011թ.

**ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՄԱՍՏԱՆԻ ՀԵՏ (1918-1920ԹԹ.)»**

1918-1920թթ. Հայաստանի Հանրապետության պատմությունը իր ուրույն տեղն ունի հայոց պատմության մեջ: Երկարատև ընդմիջումից հետո հայ ժողովրդին հաջողվեց վերականգնել կորցրած պետականությունը, սակայն, գտնվելով ռազմաքաղաքական բարդ ու խճճված զարգացումների ցանցում, Հայաստանի Հանրապետությանը վիճակված չէր երկար գոյատևել: Հայաստանի Հանրապետության նորաստեղծ իշխանությունները կանգնած էին բարդ ու դժվարին խնդիրների առջև: Մի կողմից ցեղասպանությունից մազապուրծ եղած գաղթականության հոգսերը և ներքին բազմաթիվ խնդիրները, մյուս կողմից՝ արտաքին ճակատում քաղաքականության ճիշտ մշակումը:

Պատմադիվանագիտական գրականության մեջ բազմաթիվ ուսումնասիրություններ կան Հայաստանի Հանրապետության տարբեր ոլորտների վերաբերյալ: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանը տևական ուսումնասիրությունից հետո գիտական հասարակայնությանը ներկայացրեց ծավալուն մի աշխատություն՝ «Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1920թթ.)» (Երևան, ԵՊՀ հրատ., 2011թ., 416 էջ, մենագրություն), որի շնորհիվ, բազմաթիվ նոր փաստեր և մոտեցումներ առաջին անգամ դրվեցին գիտական շրջանառության մեջ: Այն, ըստ էության, ամբողջությամբ ընդգրկում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության պատմությունը հայ-ռուսական հարաբերությունների համատեքստում: Հեղինակի տեսադաշտից դուրս չեն մնացել նաև ՀՀ ներքին խնդիրները, որոնց անմիջական ազդեցության ներքո հանրապետության ղեկավարությունը ստիպված է եղել փոփոխություններ կամ սրբազրույթներ կատարել արտաքին քաղաքականությունը մշակելիս: 1991թ. հետո, երբ նորովի լուսաբանվեց Հայաստանի Հանրապետության պատմությունը, պատմագիտության մեջ տարածված էր այն տեսակետը, թե ՀՀ ղեկավարությունը Ռուսաստանի հետ հարաբերություններն ակտիվացրել է հիմնականում 1920թ. ապրիլից հետո: Պրոֆեսոր Գ. Պետրոսյանի այս աշխատանքով վերջնականապես հստակեցվեց և նոր լույսի ներքո ներկայացվեց այն իրողությունը, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորմամբ հանրապետության ղեկավարությունը զբաղված էր անկախության հենց առաջին օրվանից:

Աշխատանքի առաջին գլուխը վերաբերում է Ռուսաստանի հետ հարաբերությունների հաստատման առաջին քայլերին և ժամանակագրական առումով ընդգրկում է 1918թ. հունիս-նոյեմբեր ամիսները:

Արտաքին քաղաքական զարգացումներին զուգընթաց փաստական հարուստ նյութի հիման վրա Գ. Պետրոսյանը ներկայացրել է նաև հանրապետությունում տիրող բարոյահոգեբանական վիճակը: Այսպես, Հայաստանի տարբեր շրջաններից Երևանում ապաստան գտած գաղթականությունը յուրովի էր պատկերացնում հանրապետության իշխանությունների անելիքները, մասնավորապես, «Սասունցիք մի ուրոյն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար, չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպէս որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, և կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչև որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրաթապետի հանգամանք առած «Ռուբէն Փաշայի» անունով: Արեշցիք չէին կարողանում հասկանալ, թե Հայաստանի կառավարութիւնը ինչպէս կարող է որևէ այլ գործով զբաղուել, երբ նա դեռ չի սպանել վերջին թուրքին մեր երկրում: Չէ՞ որ այդ թուրքերը կամ նրանց ազգակիցները ոչնչացրել էին Արեշի և Նուխու 40.000 հայ ժողովուրդը»:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև այն, որ Հ. Քաջազնունու կառա-

վարությունը առաջին իսկ օրերից չի անտեսել Ռուսաստանի հետ հարաբերությունների զարգացումը, սակայն, մարտավարական նպատակներից ելնելով, այն առաջին պլան չի մղվել հենց թեկուզ թուրքերի մոտ ավելորդ կասկածներ չառաջացնելու համար: Այդ մասին, ինչպես մշում է Գ. Պետրոսյանը, տեղեկացված էր նաև Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» քարոզչական բաժինը, որի հմ. 28 ամփոփագրում ասված էր, որ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի օգնական Գ.Մելիք-Ղարազյոզյանը հայտարարել է, թե «Հայաստանի քաղաքականությունը բարենպաստ է Ռուսաստանի հանդեպ: Այն հնարավոր է դարձնում մինչև անգամ Ռուսաստանի հետ Հայաստանի վերամիավորումը: Եթե անգամ այս կամ այն արտաքին գործոնների ազդեցության տակ Հայաստանի կառավարությունը ստիպված լինի այլ բնույթի պաշտոնական հայտարարություններ անելու, ապա ...դրանք պետք է դիտել որպես հարկադրված քայլեր»:

Այսինքն ի տարբերություն Վրաստանի և Ադրբեջանի, որտեղ հակառուսական տրամադրությունները պետական մակարդակի էր հասցված, ՀՀ-ում բոլորովին այլ մթնոլորտ էր տիրում:

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը ներկայացնում է նաև ՀՀ իշխանությունների կողմից Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու փորձերը, մասնավորապես Բեռլինում Ա.Իոֆֆեի հետ բանակցությունները: Բազմաթիվ արխիվային փաստաթղթերի վերլուծությունից պարզ է դառնում, որ նախկին ժամանակավոր կառավարության անդամները Անդրկովկասում որպես Ռուսաստանի հիմնական դաշնակից տեսնում էին հայերին: Այդ մասին է վկայում Գ. Չամոյանի հետ հանդիպման ժամանակ Պ. Միլյուկովի կողմից արված հայտարարությունը. «Այս պատերազմում հայ ժողովուրդը ապացուցեց, որ Անդրկովկասի ազգություններից միակն է, որ պետական գիտակցություն և կայուն ոգի ունի»: Վերջում Պ. Միլյուկովը ավելացնում է, «Հայաստանի նվիրվածությունը Ռուսաստանին երբեք չի մոռացվի և ես անձամբ ամենուր կպաշտպանեմ հայ ժողովրդի շահերը»:

Ինչպես հեղինակն է ցույց տալիս, այնուհանդերձ, ՀՀ իշխանությունները հենառատեսորեն ձեռնպահ էին մնում ներռուսական հակամարտություններին և հակախորհրդային ճակատ ստեղծելու քայլերին մասնակցելուց:

Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց մասնակցել Սարմարա ծովի Իշխանաց կղզիներում (1919թ. փետրվար), Վարշավայում (1919թ. դեկտեմբեր) և Եկատերինոդարում (1918թ. նոյեմբեր, 1919թ. դեկտեմբեր) հրավիրված վեհաժողովներին, որովհետև օրակարգում քննարկվում էին բոլշևիզմի դեմ միասնական ճակատի ստեղծման և միասնական Ռուսաստանի վերակերտման հարցերը:

Այսպիսով, Գ. Պետրոսյանն արխիվային վավերագրերի և հարուստ գիտական գրականության միջոցով հաստատում է, որ Հայաստանի Հանրապետության գոյության առաջին շրջանում Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու կառավարության դիվանագիտական ջանքերը, ցավոք, հաջողություն չունեցան, այնուհանդերձ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ելնելով երկրի արտաքին քաղաքական շահերից, չմասնակցեց Խորհրդային Ռուսաստանի դեմ մղվող պայքարին:

Մենագրության առաջին գլխի վերջին ենթագլխում հեղինակն անդրադառնում է Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու առաջին քայլերին, ինչպես նաև Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» ներկայացուցչի գործունեությանը երևանում: Այս ենթագլխում լուսաբանվում է, թե ինչպես Հայաստանի Հանրապետությունը լուրջ ջանքեր գործադրեց Կուբանում հակախորհրդային երկրամասային կառավարության և Ռուսաստանի հարավի նոր ձևավորված զինված ուժերի հրամանատարության հետ կապեր հաստատելու համար՝ ակնկալելով նրանց աջակցությունը հայ ռազմագերիներին և գաղթականներին հայրենիք տեղափոխելու, հացի, սննդամթերքի, ռազմամթերքի հայթայթման և այլ խնդիրների լուծման գործում:

Գ. Պետրոսյանը նրբանկատորեն ցույց է տալիս, թե ինչպիսի զգուշավորությամբ էին ՀՀ իշխանությունները վերաբերվում Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային կազմավորումների հետ հարաբերություններին:

Մենագրությունում մանրամասն քննվում են նաև հայկական բանակում ձևավորված դրական տրամադրվածության պատճառները, որոնք լայն հնարավորություն ստեղծեցին Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու համար: Պրոֆ. Գ. Պետրոսյանը արխիվային փաստերով հիմնավոր կերպով ցույց է տալիս, թե այդ ուղղությամբ ինչ գործնական քայլեր ձեռնարկվեցին երկուստեք: Այսպես, հայկական բանակի շտաբի պետի օգնական փոխգնդապետ Վլասևը, իր դիմումի համաձայն, զինվորական նախարար Հ. Հախվերդյանի 1918թ. հոկտեմբերի 1-ի հրամանով ազատվեց զբաղեցրած պաշտոնից և գործուղվեց Եկատերինոդար՝ Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը կից «Հատուկ խորհրդակցության» հետ կապ հաստատելու նպատակով: Հեղինակի տեսադաշտից դուրս չի մնացել այն փաստը, որ փոխգնդապետ Վլասևի այցը Եկատերինոդար կրում էր կիսապաշտոնական և գաղտնի բնույթ, որովհետև իր ուժը պահպանում էր Բաթումում Հայաստանի Հանրապետության պատվիրակության 1918թ. հունիսի 3-ին Թուրքիայի նկատմամբ ստանձնած պարտավորությունը (ուժի մեջ էր նաև հունիսի 4-ի հայտնի պայմանագիրը), որի պատճառով էլ Հայաստանի Հանրապետության կառավարության և զինվորական նախարարության կողմից Վլասևին համապատասխան հավատարմագիր կամ վկայական չտրվեց:

Հեղինակի գործադրած ջանքերի շնորհիվ ակնհայտ է դառնում, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը մի կողմից ձգտել է հարաբերություններ հաստատել Ռուսաստանի հարավի զինված ուժերի գլխավոր հրամանատարության ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ, իսկ մյուս կողմից նրանց նկատմամբ դրսևորել է խիստ զգուշավորություն, որի հետևանքով այդ հարաբերությունները կրել են գաղտնի բնույթ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը խուսափում էր Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ որևէ քաղաքական դաշինք կնքելուց և փորձում էր հարաբերությունները սահմանափակել առևտրատնտեսական շրջանակներով, մասնավորապես, հացահատիկ, սննդամթերք, զինամթերք և առաջին անհրաժեշտության ապրանքներ ներկրել ծանր վիճակում գտնվող Հայաստանի համար, ինչպես նաև հայրենիք տեղափոխել հայ ռազմագերիներին և զաղթականներին:

Մենագրության երկրորդ գլխում քննության է առնված ՀՀ-ի հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ 1918թ. դեկտեմբեր-1919թ. հուլիս ընկած ժամանակահատվածում:

Հեղինակի ուշադրության կենտրոնում են հայտնվել Փարիզի հաշտության վեհաժողովում հանրապետության պատվիրակության խնդիրները, ՀՀ կառավարության արևմտյան կողմնորոշման քաղաքականությունը և դրա պատճառներն ու ակնկալիքները:

Ինչպես նշում է Գ. Պետրոսյանը, թեև բուլշևիկյան գաղափարախոսությունը Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերի համար անընդունելի էր, այնուհանդերձ քայլեր էր կատարվում բարիդրացիական հարաբերություններ հաստատել ոչ միայն ոչ խորհրդային պետական կազմավորումների, այլև խորհրդային Ռուսաստանի հետ՝ անկախ վերջիններիս քաղաքական կառուցվածքից:

Սակայն, պարզաբանում է հեղինակը, քաղաքական նոր իրադրության պայմաններում Անդրկովկասում բախվում են Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի շահերը: Այսպիսի իրավիճակում ՀՀ կառավարությունը ձեռնպահ մնաց խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելուց, քանի որ այն կարող էր խիստ բացասական հետևանքներ ունենալ հանրապետության համար:

Հեղինակը օրինաչափորեն առաջ է քաշում հետևյալ հարցադրումը. իրականում ո՞րն էր ՀՀ ղեկավարության վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ: Հիմնվելով փաստերի և գիտական գրականության վրա, Գ. Պետրոսյանը զարգացնում

և հիմնավորում է ՀՀ արտաքին քաղաքականության նպատակները, մասնավորապես, նշելով, որ Հայաստանի Հանրապետությունը՝ ունենալով մեծ ակնկալիքներ Փարիզի խաղաղության վեհաժողովից, կողմնորոշվեց դեպի արևմուտք, սակայն չցանկանալով հարաբերությունները խզել Ռուսաստանի հետ՝ ձգտում էր ստանալ նրա բարյացկամ վերաբերմունքն ու աջակցությունը իր առջև ծառայած բարդ խնդիրները լուծելու գործում: Հայ դիվանագիտությունը իր ջանքերը ուղղել էր դեպի Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումները, կոնկրետ՝ հարավի հակախորհրդային ուժերը՝ Ա. Դենիկինի իշխանությանը և փորձում էր ստանալ նրա աջակցությունը:

Անդրադառնալով Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» նկատմամբ ՀՀ կառավարության ծայրահեղ զգուշավոր քաղաքականության մյուս պատճառներին՝ Գ. Պետրոսյանը նշում է, որ դրա հիմնական պատճառներից էր Ռուսաստանի հարավի զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատարության և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հավատարիմ մնալը «Միասնական անբաժանելի Ռուսաստան» քաղաքական ծրագրին:

Մենագրությունում մանրամասն վերլուծված է, թե բրիտանական զորամասերի Անդրկովկասում հայտնվելը ինչպիսի ազդեցություն ունեցան հետագայում ՀՀ-ի և Ռուսաստանի հարավի միջև ձևավորված հարաբերությունների վրա: Պարզվում է, որ ռազմաքաղաքական զարգացումների արդյունքում, կառավարությունը հարկադրված է եղել ժամանակավորապես սառեցնել հարաբերությունները Կամավորական բանակի և նրան կից «Հատուկ խորհրդակցության» հետ:

Հեղինակը հիմնավոր ձևով ցույց է տալիս, որ բրիտանացիների երբեմն շարունակական բնույթ կրող, հակահայկական քաղաքականությունը շատ դեպքերում պայմանավորված էր հայ-ռուսական հարաբերություններով:

Մենագրության մեջ առանձին ենթագլխում Գ. Պետրոսյանը քննության է առնում նաև Վրաստանի վերաբերմունքը հայ-ռուսական հարաբերությունների նկատմամբ խնդիրը:

Ուշագրավ է, որ հայ-վրացական պատերազմի ժամանակ բախվեցին Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի հարավի Կամավորական բանակի ու նրան կից «Հատուկ խորհրդակցության» շահերը: Հեղինակը լուսաբանում է այն իրողությունը, թե ինչպես էր կամավորական բանակը ձգտում պատերազմի հարմար առիթն օգտագործել իր ազդեցությունը Անդրկովկասում ընդլայնելու և սևծովյան ափերը գրավելու համար, իսկ բրիտանական զինվորական հրամանատարությունը գեներալ Ա. Դենիկինի ռազմավարությունը խափանելու և հայերի ռուսամետությունը չեզոքացնելու նպատակով օգնում էր Վրաստանին, ինչի արդյունքում ռազմական ճակատում Հայաստանի Հանրապետության հաղթանակները դիվանագիտական ճակատում փոխարինվեցին պարտությամբ:

Մենագրությունում Գ. Պետրոսյանը փաստական հարուստ մյուսի միջոցով մանրամասն քննության է առել նաև Կարսի հարցում Ռուսաստանի դիրքորոշումը: Նա հետաքրքիր փաստեր է բերում այն մասին, թե ինչպես էր Կամավորական բանակը ձգտում Կարսի մարզը, մինչև Անդրկովկասի վերամիավորումը Ռուսաստանի հետ, դարձնել «Հատուկ խորհրդակցության» ռազմավարական հենակետ: Հեղինակը մանրամասնորեն վերլուծել է նաև 1919թ. Միացյալ Հայաստանի անկախության հռչակագրի նկատմամբ Ա. Դենիկինի վերաբերմունքը: Մասնավորապես, ինչպես Գ. Պետրոսյանն է նշում, եթե Մեծ Բրիտանիան զոհունակությամբ ընդունեց Միացյալ անկախ Հայաստանի հռչակումը, ապա Ա. Դենիկինի կողմից այն արժանացավ բացասական վերաբերմունքի, սակայն, ինչպես նկատում է հեղինակը, աշխարհաքաղաքական նոր իրադարձությունների պայմաններում հայկական անկախ պետության հաստատման գործընթացը անշրջելի էր:

Մենագրության երկրորդ գլխի վերջին ենթագլխում հեղինակի կողմից հետաքրքիր դիտարկումներ են արվում նաև վրաց-ադրբեջանական հակառուսական ռազմական դաշինքի և դրա նկատմամբ ՀՀ-ի վերաբերմունքի մասին: Մանրամասնորեն վերլուծվում և հիմնավոր ձևով ներկայացվում են ՀՀ-ի այդ դաշինքին միանալուց հրաժարվելու պատճառները: Հայաստանի Հանրապետության կա-

ռավարությունը, ստեղծված արտաքին բարդ քաղաքական իրադրության պայմաններում, պարտավոր էր առաջին հերթին մտահոգվել իր երկրի պաշտպանությանը:

Գ. Պետրոսյանը փաստական հարուստ նյութի հիման վրա այս ենթագլխում ներկայացնում է նաև Ա.Դենիկիցի կողմից անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ տարվող քաղաքականության փոփոխության դրդապատճառները: Նա ընդգծում է, որ «Հատուկ խորհրդակցությունը» իր առաջնահերթ խնդիրը համարեց քաղաքական, ֆինանսական, առևտրատնտեսական համագործակցության ճանապարհով տիրելու և կախվածության մեջ պահելու Անդրկովկասի հանրապետությունների ռազմավարական նշանակության օբյեկտները:

Մենագրության երրորդ գլուխը վերաբերում է 1919թ. օգոստոս – 1920թ. ապրիլ ամիսներին Հայաստանի Հանրապետության՝ Սիբիրի, Հեռավոր Արևելքի և Ռուսաստանի հարավի հետ ունեցած հարաբերություններին: Թեև Հայաստանի Հանրապետությունը ծովակալ Ա.Կուլչակի կառավարությունից չունեց մեծ սպասելիքներ, քանի որ այն կտրված էր ՀՀ-ից վիթխարի տարածությամբ և բազմաթիվ մանր ու խոշոր իշխանություններով, այդուհանդերձ, ինչպես նշում է Գ. Պետրոսյանը, ՀՀ կառավարությունը որոշեց ունենալ իր դիվանագիտական ներկայացուցիչը նաև ծովակալ Ա.Կուլչակի կառավարությունում, որպեսզի այնտեղ և ճանաչել տարի ՀՀ-ի անկախությունը: Բացի այդ ՀՀ իշխանությունները ակնկալում էին Փարիզի խաղաղության վեհաժողովում Օմսկի և Եկատերինոդարի արտաքին գործերի նախարար Ս.Սազոնովի, ռուսական «Հատուկ քաղաքական խորհրդակցության» և նրա ղեսպանական խորհրդի միջոցով ստանալ աջակցություն՝ Հայկական հարցի լուծման գործում: Կարևորվում էին նաև Սիբիրի և Հեռավոր Արևելքի տարբեր երկրամասերում ապաստանած հազարավոր հայ գաղթականների կենսական խնդիրների լուծումը և ներգաղթի կազմակերպումը:

Գ. Պետրոսյանը անդրադարձել է նաև «Հատուկ խորհրդակցության» կողմից այս պատմական փուլում ՀՀ-ի հետ հարաբերությունների վերականգնման ձգտումներին՝ այդ ուղղությամբ երկուստեք արված քայլերին:

Մենագրությունում հետաքրքիր են հեղինակի կողմից մեջբերված գնդապետ Մ. Զինկևիչի դիտարկումները. վերջինս խորհուրդ է տալիս Կամավորական բանակի բարձրագույն հրամանատարությանը այն մասին, որ «Հայկական հարցը ապագայում Ռուսաստանի համար ունենալու է կարևոր նշանակություն, ինչպես նախկինում էր: Պետք է հայերի հետ հաշվի նստել որպես ամենաչեզոք տարրի, ուստի ներկա պահին անհրաժեշտ են համարում հայերին ցուցաբերել բարոյական, իսկ ավելի լավ է՝ նյութական օգնություն: Ընդ որում անհրաժեշտ է գործել՝ չգրգռելով մահմեդականներին, առանձնապես թուրքերին»:

Գ. Պետրոսյանը անդրադարձել է նաև այն փաստերին, որոնք ցույց են տալիս, թե այս ուղղությամբ ինչ քայլեր են կատարվել, օրինակ, երբ Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր ծանր վիճակում, օգոստոսի վերջերին մեծ դժվարությամբ հաջողվեց Բաթումից ցամաքային ճանապարհով Արդահան, ապա այնտեղից Երևան ուղարկել երեք միլիոն փամփուշտ: Սակայն, ինչպես նկատում է հեղինակը, օգտագործելով ռազմական ու տնտեսական օգնության ձևերը՝ Կամավորական բանակի հրամանատարությունը Հայաստանի Հանրապետության վրա քաղաքական ազդեցություն էր ձեռք բերում՝ շեշտելով հարաբերությունների վերականգնման անհրաժեշտությունը:

Հեղինակի կողմից շրջանառության մեջ դրված արխիվային փաստաթղթերից պարզ է դառնում նաև, որ հակառակ ռուսական քաղաքական շրջանների սպասումների, Հայաստանի Հանրապետության իշխանությունները չէին դրսևորում շտապողականություն՝ Ռուսաստանի հարավի հետ հարաբերությունները վերականգնելու խնդրում:

Գ. Պետրոսյանը այս փաստը բացատրում է նրանով, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը շարունակում էր հույսեր փայփայել՝ օգնություն ստանալու Փարիզի խաղաղության վեհաժողովից և Համաձայնության պետություններից: Հույսեր էին կապում նաև ՀՀ ժամանած գնդապետ Ու.Հասկելի և Հա-